ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

18.02.2023 թ. Քաղաք Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, անդամներ՝ Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Ա. Ուլիխանյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԳ-ի նախագահ Թ. Ջանվելյան, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ի. Բաղիրյան, Հ. Սանթրոսյանը, Լ. Մնացակյանը: Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Բաց քվեարկությամբ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 8/1.-Հաստատել նիստի օրակարգը.

Օրակարգ

1. 2022-2023 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկման մասին (զեկ. Ա. Մարգարյան):
2. Հաղորդում ամբիոններում կրթական ծրագրով նախատեսված դասընթացների e-learning հարթակում պատշաճ ներկայացվածության մասին (զեկ. Ա. Մարգարյան, Գ. Հովհաննիսյան):
3. Հաղորդում 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների և ժամանակացույցերի մասին (զեկ. Ա. Մարգարյան):

1. ***Լսեցին.- 2022-2023 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկման մասին (զեկ. Ա. Մարգարյան):***

Դեկանի պաշտոնակարը հաղորդեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2022-2023 ուստարվա առկա համակարգով առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 159 ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 94 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 65 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 97 ուսանող, 10 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ («Ֆինանսներ» ԿԾ 9, «Զբոսաշրջություն» ԿԾ 1 ուսանող): Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 73, 84 % (Զբոսաշրջություն 73,65 %, Ֆինանսներ 74,04%): Անբավարար գնահատական է ստացել 61 ուսանող («Ֆինանսներ»

ԿԾ 39, «Զբոսաշրջություն» ԿԾ 22 ուսանող): Անվճար ուսուցման համակարգով սովորում է 33 ուսանող («Ֆինանսներ» ԿԾ 21, «Զբոսաշրջություն» ԿԾ 12 ուսանող), բացարձակ առաջադիմությունը կազմում է 96,4%: Վճարովի ուսուցման համակարգով սովորում է 125 ուսանող («Ֆինանսներ» ԿԾ 73, «Զբոսաշրջություն» ԿԾ 52 ուսանող), քննաշրջանը հաղթահարել է 67 ուսանող, բացարձակ առաջադիմությունը կազմում է 53,6%:

Դեկանի պաշտոնակարը հաղորդեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2022-2023 ուստարվա հեռակա համակարգով առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 183 ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 105 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 78 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 41 ուսանող:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2022-2023 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի արդյունքներն մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին.- Հաղորդում ամբիոններում կրթական ծրագրով նախատեսված դասընթացների e-learning հարթակում պատշաճ ներկայացվածության մասին (զեկ. Ա. Մարգարյան, Գ. Հովհաննիսյան):***

Զեկուցողները նշեց, որ ամբիոնների դասախոսները e-learning հարթակում իրենց կողմից դասավանդվող դասընթացները պատշաճ ներկայացրել են: Նրանք հաղորդեցին, որ ֆակուլտետի e-learning հարթակի աշխատանքները համակարգող Ս. Սաֆարյանը բարեխղճորեն իրականացնում է խորհրդատվություն և աջակցում է այն դասախոսներին, ովքեր ունեն խնդիրներ հիշյալ հարթակից օգտվելու գործում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Ամբիոններում կրթական ծրագրով նախատեսված դասընթացների e-learning հարթակում պատշաճ ներկայացվածության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ***Լսեցին.- Հաղորդում 2022-2023 ուստարվա II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների և ժամանակացույցերի մասին (զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը հաղորդեց II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին, մասնավորապես նշելով, որ ժամանակացույցից որևէ շեղում տեղի չի ունեցել: Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների օրերի որոշման համար հիմք են ընդունվել դասախոսների դասացուցակները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. -II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների և ժամանակացույցերի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ *Ա. Մարգարյան*
Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*